

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

ՆԱԽԱԿ ԿԱՐՈՐ ԵՒ Ե ԳՐՈՒԹԻՒՆ
ՊԵՏԻ Ե ՈՐՂՂԵՒ ԿԱԻ
Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ
ԳԱՀԻՐԷ (Հասպոպոլիտ)

Rédaction du journal arménien
ARCHALOUICE
HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)

ԱՐՇԱԼՈՅՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՇԱԽԱՐ
Տարեկան, ողջ դահլիճ. 60
Վեցամսեայ » 35
ՕՏՈՐ ԵՐԿՈՐԵՐ
Տարեկան Ֆրանկ 20
Վեցամսեայ » 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻ ԿԱՆՆԻԿ Է
ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ
Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած
գրութիւնք եւ չ'են սրուիր:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

Մարդ ընկերական էակ մ'է: Ընկերական բնագոյն այնքան զօրաւոր է մարդոց մէջ՝ որքան խմբովին ապրելու բնագոյն կենդանիներու մէջ:

Կենդանիներ կան՝ որ մասնաւոր հաճոյք և բերկրանք կ'զգան խմբովին ապրելու կամ ճարակելու մէջ. նոյնը ճշմարտ է նաև մարդոց համար, միայն թէ մարդոց համախմբումին քանակը աւելի մեծ է և անոնց ապրելու և գործելու եղանակներն աւելի ազնիւ են և բարձր:

Պատմութիւնք և փիլիսոփայութիւնք կը հաստատեն թէ երբ մարդ զրկուի ընկերական կեանքէն՝ իւր բնաւորութիւնք աւելի կը խտրանան ու կ'իյնայ անզգայութեան և նոյն իսկ բարբարոսութեան վիճակի մը մէջ: Ուր որ չկայ ընկերական կեանք, ուր որ չկայ ընկերական մաքրութիւն կամ սրբութիւն՝ հոն չկայ նաև նկարագրի բարձրութիւն, սրտի ազնուութիւն, բարոյական ուղղութիւն և իրաւանց ու պարտոց գիտակցութիւն:

Ընկերական յարաբերութիւններու միջոցաւ է միայն որ կ'աճին ու կը զարգանան մարդոց մտաւորական կարողութիւններն, կ'ազնուանան վարքերն ու կը նրբանան ճաշակներն: Ոչինչ կրնայ զսպել մարդոց անարգ կիրքերն, քան որքան մտքին և հոգւոյն առողջ վիճակն: Երբ մարդ պէտք եղած կերպով կը կրթուի ու բարձրագոյն և ազնուագոյն կարողութիւններու հպատակութեան կ'ենթարկուի՝ այն ատեն կը լինի կարևոր գործիչ մը ընկերական անտեսագիտութեան մէջ:

Ուր որ ալ և ինչ վիճակի մէջ ալ որ լինի մարդ՝ միշտ կը փնտռէ ու կը գտնէ իրեն յարմար կամ անյարմար ընկերներ:

Ընկերական այս միտումն միշտ ազդու դեր մը կը կատարէ մարդկային կենաց բոլոր ընթացքին մէջ. Այսպէս ընկերական միտումն կամ համակրանքն կը ձգտի դէպ ի ընկերական կազմակերպութիւն և անհատականութիւնն տեղի կուտայ հաւաքականութեան կամ ազգայնութեան՝ որով մարդիկ կը կազմեն նաև ձևական կամ պաշտօնական միութիւնը:

« Բնութիւնը իմ մէջ » կըսէ Անտոնիոս, « բանաւոր է և ընկերական, ես իբր Անտոնիոս՝ զՀոսովմ կը ճանչեմ իմ հայրենիք եւ քաղաք. իսկ իբր մարդ զայսորհ կը

ճանչեմ իմ հայրենիք ու քաղաք »: Պէտք չէ՝ ուրեմն երբէք անձնական շահու տեսակէտով նկատել ընկերականութեան խնդիրն այլ պէտք է միշտ աչքի առջև ունենալ թէ ընկերական կեանքն ունի ինչպէս իւր սեփական օրէնքներն ու կանոններն, նոյնպէս ալ ունի նաև իւր մասնաւոր պարտականութիւններն ու պատասխանատուութիւններն: Այսպէս ուրեմն մարդ չ'կրնար գոհ կերպով ապրել եւ մնալ լիկ իւր ընկերական էակ մը, այլ պէտք է լինի նաև ընկերական գործիչ մը. և իբրև ընկերական գործիչ կարելի չէ որ մարդ անտարբեր մնայ իր պարտոց գիտակցութեանը և անոր գործադրութեանը մէջ՝ առանց մեղանշած լինելու ընկերական օրինաց և ոգւոյն դէմ:

Մարդկային ընկերութիւնը կարելի է նմանցնել կազմակերպութեան մը՝ նման մարդկային մարմնոյն կամ կազմին, և ինչպէս մարմնոյն բոլոր անդամներն իրարմէ տարբեր կազմերով ու պաշտօններով պէտք ունին իրենց աճման, զարգացման և պահպանութեան համար իրարու օգնութեան, նոյնպէս ալ մարդիկ իբր ընկերական էակ իրենց գոյութեանը պահպանութեան և յառաջդիմութեան համար պէտք ունին իրարու օգնութեան: Գլուխը չ'կրնար ընել ուղեբերուն թէ ես քեզի պէտք չունիմ, ո՛չ ալ ստամբոքը բերանին թէ ես առանց քեզի կրնամ ապրել. մարմնոյ բոլոր գործարաններն, սիրտ, թոք, կրկամանք և շնչն կրնար առանձինն իրենց դերը կատարել անթերի առանց մէկին կամ միւսին օգնութեան. ամենքն ալ իրարու պէտք ունին մարմնը կազմ և առողջ վիճակի մէջ պահելու համար: Մի և նոյն սկզբունքը կը անանք նաև մարդկային ընկերականութեան մէջ:

Բնութեան մէջ ամեն ինչ օրէնքով կը կառավարուի և ամեն ինչ նայատակի մը կը ծառայէ. Երկնից անհուն տարածութեան մէջ թաւալող անթիւ աշխարհներ իրենց շրջանին մէջ կատարելով իրենց պաշտօնն կը ծառայեն ա՛յն նայատակին՝ որոյ համար սանձաւաճ են: Մի թէ մա՞րդ միայն պէտք է բացառութիւն նկատել իր շրջանին մէջ՝ երբ նա թերի կը դանուի իւր պարտոց գիտակցութեանը և անոր գործադրութեանը մէջ: Ո՛չ: Մարդ ա՛յնքան պարտաւոր է տիեզերական օրինաց հպատակելու որքան կենդանիներ և նիւթական աշխարհներ: Մարդ պէտք է գիտնայ թէ իր շրջանին մէջ կատարելիք դեր մը ունի, և այդ դերն է ընկերական պարտականութիւնը:

ՏՐ. ՅԱԿՈԲԵԱՆ

ՔԱՂՈՒԱԾ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԷ

ՊԵՏՐՈՒԹՅԱՆ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻԿ

1. Կապոյտ աչքերն ամենէն տկարները կը համարուին:
2. Վեր նայող աչքերն անձնութեան տկար են:
3. Բաց աչքերը յանգնութեան նշանակ են:
4. Կողմակի նայող աչքերն անվստահելի են:
5. Թուխ աչքերն ամենէն զօրաւորներն ըլլալ կը նկատուին ակնաբոյժներէն:
6. Փոքր աչքերը խորամանկութեան նշանակ են:
7. Վար նայող աչքերը լրջութիւն կ'ենթադրեն:
8. Բնականէն մեղամաղձոտ անձինքներու մէջ շատ քիչ կապոյտ աչք ունեցող կրնայ ըլլալ:
9. Երկու աչքերու իրարմէ ճիշտ հեռաւորութիւնն աչքին լայնքն է:
10. Աչքին ճերմկուցը եթէ ծիածանին տակ գտնուի, նկարագրի ազնուութիւն կը նշանակէ:
11. Երկայն եւ սուր անկիւն աչքերը մեծ գատողութիւն եւ սրամտութիւն կը ցուցնեն:
12. Թուխ աչքերը բարկութեան կամ յուզման ատեն երբ կանաչի փոխուին՝ կը ցուցնեն թէ մաղձային բնութիւն ունին:
13. Աչք մը, որուն վերի կափարիչը բլրին վրայէն հորիզոնական ուղղութիւնով կանցնի, մտաւորական կարողութիւն կը ցուցնէ:
14. Եթէ վրայի կափարիչը բլրին կէսը կամ աւելին ծածկէ, պաղ խորհրդածութիւն կը նշանակէ:
15. Անհաստատ աչքերը, որ միշտ աստ անդ կ'երբան, խռովեալ միտք մը կը ցուցնեն:
16. Կ'ըսուի թէ լուսնոտներու արկելանոցներու մէջ աչաց ընդհանուր գոյնը թուխ եւ սեւ է:
17. Քիչ արտեւանուներով ու երկայն գոգաւոր թարթիչներով ո՛ր եւ է գոյնի աչքերը տկար կազմութիւն կը ցուցնեն:
18. Դիմագէտները կ'ըսեն, թէ ա՛յն աչքերը, որ լայն են՝ կը ցուցնեն մեծ ուշիմութիւն եւ անմոռանալի յիշատակ:
19. Աչքերը որոյ բոլոր ծիածանը տեսանելի է, անհաստատ մարդոց կը պատկանին, որոնք յաճախ յիմարութեան հակամէտ են:
20. Տկար երկույթով բաց ու սեւեռեալ աչքերը կը ցուցնեն նախանձոտութիւն, սնապաշտութիւն, անհաստատ կամակորութիւն:
21. Գլխուն մէջ իրարու մօտեցող աչքերը տրամադրական զայրոյթ, նախանձ ու յանցանք գոտալու ձեւ կը նշանակեն:
22. Երբ աչքին վերի կափարիչն տակի կամարը կատարեալ կետաշրջանակ է, բարութեան նշանակ է:
23. Կ'ըսուի թէ հանճարեղ մարդիկ ունին վճիռ աչքեր եւ հանդարտ շարժուածք որ մտաւոր կարողութիւն կը ցուցնեն:
24. Կապոյտ աչքերն ընդհանրապէս կնամարդի կը նկատուին

(Թարգ.)

Բիւզանդիոն.

ՅԱՐԱԼԷՉ ՈՐՔԱՏՈՒՆԿԸ

Նիկարագուրայի մէջ տունկ մը գտնուած է զոր բնիկները ստանալից ծուղակը կ'անուանեն եւ որ ամէն կենդանի արարածի արիւնը կ'ըստէ երբ իր մահաբեր ճիւղաներուն ներքեւ իյնայ:

Բնագատում մը որ Ամերիկացի նոր դարձած է կեզրոն, այդ տունկի մասին կը պատմէ թէ երբ բուսական նմոյշներ կը հաւաքէր Նիկարագուրայի մեծ լճերուն շուրջն, իր շան հաչիւնը կը լսէ եւ կը վազէ որ պատճառն իմանայ: Չարմանքով կը տեսնէ որ շունը պարփակուած է շունի նման բարակ արմատներէ եւ թելերէ, որոց ծակ-տիւրներէն թանձր խէժ մը կը հոսէր:

Բնագատում մը դժուարութեամբ կը յաջողի կարելի դանակով մը սրթատունկին մտուտ ու տոկուն թելերը որպէս զի շունը ազատէ: Սոսկալով կը դիտէ որ շան մարմինը արիւնով ծածկուած է եւ մորթը ծակծկուած:

Որթատունկը կտրելով ոստերը կը դառնան ոլորապտոյտ շարժուն մատերու պէս եւ բաւական ոյժ պէտք եղած է որպէս զի ձեռքն ազատէ անոնց կպչուն շոշափումէն: Բնիկները այլ եւ այլ գրոյցներ կը պատմեն այդ յարալէզ որթատունկին մահատու գորութեան վրայ, վասն զի երբ կենդանի արարած մը անոր ճիւղաներուն որս մնայ, արիւնը կը ծծէ եւ քիչ ատենէն միայն կ'մախքը կը թողու:

Բ. Արեւելեան Մամուլ.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

Բարիզ 3 Նոյեմբեր 99

ԱՆԿԼԻՍ.

Այս վայրկենիս, Թրանսպալի պատերազմով, Անգղիա Ափրիկէի գրաւման խնդիր կը յարուցանէ, Ֆրանսա իւր միակ հակառակորդն է սե երկրամասին մէջ: Պօէրներն յաղթուելով, Լարէնսո-Մարքէզը առնուելով, կը մնայ միայն Գերմանիոյ հետ հասկցողութեան մը յանգիլ մի քանի խնդիրներու մասին եւ տեղացի ֆէթիլներն ու մահմետականներն ֆրանսական գաղթականութեանց դէմ յարուցանել:

Սէնսաիններն՝ Ալճէրիոյ սահմանագլխին վրայ, Սապահ՝ Սուտանի կողմէն, Անգղիոյ օտանդակութեամբ Թրանսան մինչև ծովեզերք կրնան քշել:

Ափրիկէն Ասիոյ հետ այնպիսի մի նեղ պարանոցով կապուած է որ կարելի է զայն նկատել իբրև մի կղզի: Նա դիւրութեամբ կրնայ պաշտպանուիլ յարձակողի մը դէմ, Անգղիոյ զօրաւոր նաւատորմիցով երբ նա նպաստաւոր կէտերուն վրայ զետեղուի: Ահ, եթէ Հնդկաստան ալ Ափրիկէի պէս ջրով շրջապատուած լինէր, բնաւ չ'պիտի կասկածէին զայն երկար պահելու, եւ չ'պիտի վախնային Ռուսաց յարձակումէն:

Սակայն Հնդկաստան կղզի մը չէ եւ անկասկած դիտեն թէ քիչ ժամանակէն նա Անգղիոյ ձեռքէն պիտի ելլէ, ուստի սքանչելի հեռատեսութեամբ մը Լոնտոնայի պետական մարդիկն կը ջանան Ափրիկէի մէջ դիրք գրաւել, որ արդէն կէս մը անգղիական է եղեր:

Արդէն ճիւղալթարէն՝ Անգղիա Մարօքի վրայ կը տիրէ, Ադէքսանդրիայէն՝ Նեղոսի հովտին կ'իջնէ, Սուէզով նա այդ երկրաբաժինն կը կղզիացնէ, Գափէն՝ Ափրիկեան

եռանկիւնին ծայրն կը բռնէ եւ երկու ուկիանոսներու հաղորդակցութեան վրայ կը հակէ: Արեւմտեան կողմէն՝ Նիթէուր, Արեւելքէն Չանգիպարը՝ այն գլխաւոր կէտերն են որոցմէ Անկլո-Սաքսոն ազգեցութիւնը կը տարածուի:

Այսօր այլ եւ խնդիրը Գափի մէջ անգղիական գաղութներն Նեղոսի հովտին հետ միացնել չէ, այլ երկրի այդ մասն Արեւմուտքէն Արեւելք անգղիական դժով մը կապելն: Փորթուկալցիք չեն կրնար զայն արգելել: Գալով Գերմանացոց, ասոնց տրամագրութեան տակ կը դնեն, ինչ որ ուրիշներու գրպանէն կ'առնեն: Ֆրանսա միակ արգելքն է, միտն Ֆրանսա կրնայ Անգղիոյ զօրութիւնն խախտել: Ուստի ասոր համար պէտք է Ֆրանսան անգամաւրօժել անոր դէմ՝ ներքին եւ գաղթական դժուարութիւններ յարուցանելով:

Այս վայրկենիս որ Ֆրանսա իւր բոլոր ուժերով ցուցանդէսով զբաղած է, եւ որ ժամանակ գիտեն թէ Ֆրանսա — եթէ բացարձակապէս ստիպուած չլինի — ու է զինուորական շարժում չ'պիտի ուզէ ընել, Անգղիացիք ամենայն ազատութեամբ կը գործեն Ափրիկէի մէջ 200,000 զիւղացիներու դէմ՝ 70,000 զինուոր զրկելով, նա ինքզինքն պատրաստ կը ցուցնէ ամեն տեսակ զոհողութեանց: Սակայն աւազի հատիկ մը յաճախ բաւական է ամենազօրաւոր մեքենայներն արգելելու համար եւ անգղիացոց կրած մի քանի պարտութիւններն, Պօէրներու դիւցազնական դիմադրութիւնն մեզ մտածել կուտան: Գիտնանք ատկէ օգտուիլ:

ՀԱՐԱՆԱՓՐԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Թէպէտ շատ խիստ են Հարաւ-Ափրիկեան պատերազմի դաշտէն եկող հեռագիրներու վրայ գործադրուած հսկողութիւններն, սակայն ճշմարտութիւնն կամաց կամաց երևան կ'ելլէ եւ բնաւ գոյն չունի Անգղիան գոհացնելու: Տունտէի եւ Կլէնգոյէի տեղատուութիւններն, Լատամիթի պարտութիւններն, ընդհանուր յարձակման ժամանակ անգղիական ձախ թեւին խորատկումն տխուր երևոյթներ էին, իսկ այսօր դրութիւնն բոլորովին յուսահատելի է: Զօրավարն Լինգա Մէյթը որ Պօէրներուն աջակողմեան զօրագունդին կը հրամայէր գերի բռնած է անգղիական ձախ թեւին 2,000 զինուորներն եւ թնդանութներն եւ դէպ ի հարաւ առաջացեր է եւ շատ կարեւոր դիրքերու տիրեր է: Զօրավարն Հուայթ յուսահատական շարժում մը բրած է այս առաջացումն արգելելու համար: Այս մասին Ուար-ՕՔեփը լուռ կը կենայ, սակայն հաստած աղբիւրներէ գիտենք թէ անգղիացիք այդ շարժման մէջ 2000 հոգի դարձեալ կորսնցուցած են: Ուրեմն այս վերջին օրերս Անգղիացիք մտ 6,000 հոգի կորսնցուցին մեռած, վիրաւորեալ կամ գերի ընկած: Եթէ մտածենք թէ զօրավարն Հուայթ միայն 13,000 հոգի ունի իւր հրամանատարութեան տակ, կը տեսնուի թէ Լատամիթը պաշտպանուելու համար հազիւ 6—7,000 հոգի ունի, արդէն կ'ըսեն թէ ինքն ալ

վիրաւորուած է հոն: Շատերն վհատած եւ հիւանդ են, ուստի Հուայթ պատերազմելու համար հազիւ 5,000 հոգի կրնայ ունենայ, իւր շարժմանց մէջ կաշկանդուած, անկարող օգնութիւն ստանալու: Սըր Հուայթի դրութիւնն յուսահատական է:

Եթէ ինչպէս կը ծանուցանէ հեռագիր մը, Պօէրներու զօրագունդ մը արեւելքէն գալով, Զուլուլանտի մէկ մասէն անցնելով, այս վայրկենիս կրէյթուն կը գտնուի եւ թէ միւս կողմանէ Պօէրներն բաւական զօրք թողով ի Գոլէնսօ, յարձակած են էսթգուրի վրայ, Պիւսմանս գետին վրայ տեղ գրաւելու համար, Փիէթէրսմարիցպուրկ քանի մը ժամէն կ'առնուի, եւ այս քաղաքէն մինչև Տիւրպան հազիւ 150 քիլոմէթր ճամբայ կայ: Օրանտի հարաւային սահմանագլխին վրայ ալ Պօէրներն յարձակողական դիրք բռնած են, արդէն տիրած են Գալէսպէրի. ասկէ Պիւրկէստրիֆի վրայ եթէ յարձակին մեծ ընդդիմութիւն չ'պիտի գտնեն: Պիւրկէստրիֆի յարձակումն պիտի ստիպէ Անգղիացիներն Ալիվօր-Նօրթէն մեկնելու եւ կրնայ պատահիլ որ ութ օրէն Պօէրներն իրենց իշխանութիւնը տարածեն մինչև հարաւային լեռնաշղթայն որ նոյնպիսի ամուր եւ պաշտպանելի է որքան Ազատ Պետութեան սահմանագլխին կամ Թրանսպալի հարաւային սահմանագլուխը:

Արեւմտեան սահմանագլխին՝ Մաֆքինիի եւ Գիմպլըրիի վրայ բնաւ տեղեկութիւն չկայ: Մաֆքինիի դիւցազնական դիմադրութիւն մը բրած կը թուի. գալով Գիմպլըրիի, ուր Սէսիլ Ռօսս օգնութիւն կապած եղեր, կասկածելի է թէ կարենայ երկար դիմանալ: Պօէրներն Գոլէսպէրի տիրանալով, կրնան արգելել ամէն տեսակ օգնութիւն եւ ստիպել Անգղիացիներն 400 քիլոմէթրէ աւելի ճամբայ հետիոտն ընել եւ միեւնոյն ժամանակ կրած յարձակումներուն պատասխանել: Ուրեմն կը տեսնուի թէ արեւմտեան կողմը դրութիւնն լուազոյն չէ միւս կողմերէն: Վերջապէս Անգղիացոց 20,000 զօրքերն կրնան ոչնչանալ յ'Ափրիկէ, մինչև որ նոր զօրքերն հասնին Անգլիայէն եւ գաղութներէն եւ լուրջ յարձակում մը սկսին:

ԵՐԿՈՒ ԿԱՅՍԵՐԱՅ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Վաղը՝ չաբաթ օր, Նիկողայոս Չարը՝ որ այս վայրկենիս Տարմիգատ կը գտնուի Չարուհույն ընտանեաց մէջ, Փօցտամ պիտի երթայ Կիյեօմ Բ. ի այցելութիւն տալու:

Կ'ըսեն թէ այդ այցելութիւնը մէկ ժամէ աւելի չ'պիտի տեւէ:

Շատ հաւանական կը թուի թէ այդ այցելութիւնը միայն քաղաքական լինի: Եւրոպայի արգի վիճակին մէջ, երկու զօրաւոր Կայսրներ, որպէս են Նիկողայոս եւ Կիյեօմ չեն նեղուիր մի քանի քաղաքավարական խօսքեր փոխարինելու:

Կարգ մը թերթեր ծանուցին թէ՛ հաստատ աղբիւրներէ եւ նոյն իսկ պաշտօնապէս լսած են թէ այդ տեսութիւնն եւ քաղաքականութեան հետ առնչութիւն չը պիտի ունենայ: Սակայն այդ աղբիւրներն եւ այդ պաշտօնական լուրերն օտար երկիրներէ (հասկցիր Անգլիայէ) բղխած են:

Ինչ բանի վրայ պիտի խօսին երկու կայսրներն: Մեծ թափանցող մտքի տէր լինել հարկաւոր չէ իմանալու համար թէ այդ երկու Վեհապետներու խօսակցութեան մէկ մեծ մասը պիտի կազմէ Ափրիկէի պատերազմն:

Մենք գիտենք թէ Ֆրանսա վստահութիւն կրնայ ունենալ Նիքոթա Բ. ի խօսքին վրայ. մանաւանդ որ Տէլքասէի այցելութիւնն ի Ռուսաստան և Մուրադիէֆի փարիզ գալն բաւական գրաւական կուտան այդ մասին:

A. S. և Մ. Ս. ԴԱԻԻԹ-ԲԷԿ

ԱՅԽԱՐՅԻ ՎԱԽՃԱՆԻ ՄԱՍԻՆ

Վերջերս ժողովրդեան մէկ մասը յենլով եւրոպական քանի մը լրագիրներու մէջ հրատարակուած տեղեկութիւններուն, մեծ յուզումով ու սարսափով կ'սպասեն ամսոյս 13 ին, որ կ'ըսուի թէ այդ օրն Գիսաւոր աստղ մը երկրագնտիս զարնուելով այս աշխարհը տակն ու վրայ պիտի ընէ և այսպէս պիտի ոչնչանան երկրի վրայ ապրող բոլոր շնչաւոր էակները:

Շատեր հաւատ ընծայելով այս անտղի ենթադրութեան՝ արդէն ահ ու դողի մէջ գիշեր ու ցորեկ աղօթքով կ'անցնեն իրենց ժամանակն, որպէս զի երեւակայական այս ահեղ դէպքին ատեն պատրաստ լինին հանդարտ սրտով երկինք երթալու:

Հանդարտեցնելու համար հասարակութեան՝ մանաւանդ մեր քանի մը հիւանդ բարեկամներու վրդովեալ մտքերը և փառատելու համար անոնց խռովեալ սրտին վախերը, կը հաւաստենք թէ այդպիսի դէպքի մը գուշակութիւնը բոլորովին զուրկ է կարեւորութենէ: Իրաւ է թէ ասկից գրեթէ տարի մը առաջ Գերմանացի աստղագէտ մը յայտնած էր այդ տեսակ այլանդակ գուշակութիւն մը, սակայն աստեղագէտներէն ոչ ոք կարեւորութիւն ընծայեց անոր գուշակութեան:

Իրողութիւնը այն է որ ամսոյս 14 ին կամ 15 ին և ոչ 13 ին՝ պիտի երևին երկնային մարմիններու խումբ մը որոնք Աստղ կը կոչուին:

Այս ասուպները մեծ բազմութեամբ կերևին գրեթէ ամեն 33 տարին անգամ մը: 1833 ին անոնք խիստ ուշագրաւ տեսարան մը պարզեցին և ասիլի բազմաթիւ էին 1866 ին: Արդի հաշիւներէն կիմացուի թէ ասուպներու այն բազմութիւնը, որ երկրիս հանդիպեցաւ վերջին անգամ վրդովում մը ունեցած է Լուսնիքազ և Երեւակ մոլորակնց ձգողութեան պատճառաւ: Այս անգամ թէև ո՛ր և է վրդովում տեղի չ'պիտի ունենայ, սակայն ասուպներու հեղեղ մ'է որ պիտի երևին Եւրոպայէն և Ամերիկայէն: Փափաքելի էր որ հոս ևս պատահումն գիշեր ատեն տեղի ունենայ, որպէս զի մենք ևս բարեբաղդութիւնը ունենանք զանոնք տեսնելու:

Աղէքսանդրիոյ մեր համակրելի բարեկամներէն Տ. Ա. Նագչեան (Ալօ) մեզ զրկած է իր անտիպ բանաստեղծութեան կտորներէն մին, որուն վրայ, որչափ կը յիշենք, երբեմն Պ. Ա. Չօպանեան իր Մաղիկիս մէջ հիանալով խօսած է երիտասարդ բանաստեղծին ուղղելով հետեւեալը. « Պարո՛ն,

մեծ բանաստեղծի խմբ. ունիք, Գուրեանէն ի վեր այդչափ Գուրեանական բան կարգացած չ'էի եւրն. » ու իր քանի մը տողերը մէջ բերած է:

Մենք՝ այս թիւէն սկսեալ երբեմն մեր համակրելի բանաստեղծին ԵՐԳԵՐ ՎԷՐԲԵՐ անունով անտիպ գործերէն հետզհետէ մեզի զրկուած հատուածներն պիտի հրատարակենք, մեր ընթերցողաց գրական ճաշակին գոհացում տալու նպատակաւ:

Այս առթիւ հարկ կը համարինք յայտարարել նաեւ թէ հայ իգական սեռին պատիւ բերող ՄԱՌԻ ի բանաստեղծական ամենագողտրիկ մրմունջներն, զորս Արշալոյսի մէջ հրատարակուեցան, յարգելի ընթերցողներէն ոմանք շատ անորժանօք կարգացած ըլլալով՝ փութացած են թէ՛ մասնաւոր նամակներով և թէ՛ բերանացի իրենց շնորհակալեաց և շնորհաւորութեանց արտաստալովութիւնները յայտնել իմբագրութեանս:

Լիայոյս ենք թէ յաճախ առիթը պիտի ունենանք վայելելու ՄԱՌԻ ի քերթուածները և միեւնոյն ժամանակ իր սեռին ուղղուած իր յօդուածները, որոնք երբեմն Պօլսոյ գրական հրատարակին վրայ ա՛յնչափ մեծ տեղ գրաւած էին:

ԵՐԳԵՐ-ՎԷՐԲԵՐ

ՍԵՒ ԻՂՁԵՐ

Ա

Առաւօտեան երբ արշալոյսը վառի, Երբ խաւարը պարտեալ լուսի գիրկն ընկնի, Երբ հօտաղին աստղը մարէ պաղպաղուն իր լապտերի պատրոյգն, ու սեւ վերարկուն Մի կողմ նետէ, հագնի ձերմակն, ու նուա՛ղ իր բոց մարէ, և հեծեծէ յար. աւա՛ղ, Այն աստղին հետ իմ աչքերո՛ւս ընկնի աստղ, Այն սեւին մէջ իմ ալ հասնի՛ գոյն նուաղ:

Երեկոյեան երբ վերջալոյսը մարի, Ծիկուկ արփին լուսնորուն կող խոնարհի, Արեւմուտքը հագնի պատմուճանն արևն, Ամպերն՝ բոսոր, սարերն մանիշ ըզզնուուն, Երբ մթութեան մէջ նուաղի թուչնոց երգ, Բնութիւնն համայն խորերգէ իր գաշն հագներգ, Ես ալ սեւ ե՛րգ մ'ըլլամ, սեւ ե՛րգ մը հագնիմ, Երգերո՛ւ մէջ, ձայներու հետը հատնիմ:

Միշտ սեւ մ'ըլլամ, սիրտս սեւի՛ն հագնի գոյն, Սեւ արասունք լամ, սեւ սուգին սիրտս ընեմ բոյն, Սեւ հողն ըլլայ հացս, հողը կրծեմ սեւ, Սեւ ըլլայ ջուրս, հողի ստինքն ծըծեմ սեւ, Սեւ վըհերու կզերք կախուած սե՛ւ ծըծեմ, Սեւ աշխարհիս կրծքին սեւ սեւ հեծեծեմ, Սեւ բիծ մ'ըլլամ, Տէրոջ ձակտին սեւ բազմիմ, Սեւ աշխարհիս հորիզոնէն սեւ անցնիմ:
Աղէքսանդրիւս Ա.ՎՕ

ՆԱՄԱԿ

ԱՌ ՕՐԻՈՐԴ ԼՈՒՍՆԹԱԳ

Միշտ քե՛զ, միշտ քե՛զ եմ մտածում. եթէ չ'գիտնայի թէ ժամանակի պահանջումներուն իրաւարար բաժնին իսկական գոհեալը զու՛ն էիր, եթէ չ'գիտնայի թէ անխորհուրդ մտածումի մը անխնայ ողջակէզը զու՛ն չէիր, գուցէ ևս այս նամակը այսպէս չ'սկսէի:

Ը՛սէ, ինչո՞վ կարելի է սրտի մը վայելել այն հանդարտութիւնը երբ մի անգոր արարած կրգգայ կը խորհի, կը դատէ և և իւր այդ կարողութեանց անբաւարարի իրաւունքները կը մոռցուին զրկումի, լքումի և անիրաւութեան առջև:

Միթէ հո՞ն ալ . . . միթէ այն դատաստանի՞ն ալ այդպէս . . .

Ես ապահով եմ թէ ոչ, ո՛չ երբէք: Անհունապէս անբացատրելի երանութեան մը գեղեցիկ սէրը ձգեց սրտիդ մէջ մի կայծ, յորմէ յառաջացած հրդեհի բոցերովը կը տառապիս. և երբ զիտողի մը մութ մտածումներու արգելքներէն անյոյս կաս՝ պիտի տկարանաս, քննէ անդին սիրովդ բորբոքած թշուառի մը աստապանքները մոռցած:

Կարգա՛, Մարին, Զարուհին, Թադուհին որոց անգուսպ սրտերէն դուրս լըլող սիրոյ և տեսութեան խանդավառ կրակը պիտի բաշխէին զրկեալներու քաջութիւն և յոյս:

Արդ ըսէ՛ ինձ ինչո՞վ կարելի է մեկնել լուութիւնդ. Ս՛ն. եկուր հետո՛, քեզ տանիմ ուրիշ աշխարհ մը. գոհունակութեան, երանութեան աշխարհը. տե՛ս հոն, թէ ի՞նչ է սիրուանից մարդկային ըզձանքներուն բազմազգիմի դժուարութեանց հանդէպ:

Այդ աշխարհը գիտութեան զարգացած ազատ մտածումի յորոչ և լայն հայեցողութեանը աշխարհն է, որուն մութ մի անկիւնին գոհն ևս դու այսօր ու քեզ հետ գէթ քեզմէ ոչ նուազ մի այլ թշուառ . . .

Արդ փակէ՛ աչքերդ. սրէ՛ երեւակայութիւնդ և անա պիտի կրնաս զգալ թէ ո՛ւր ես կամ ո՛ւր կը գտնուիս:

Հեռո՛ւնը. հեռո՛ւնը. ինկած, ապականած մարդկային հոծ բազմութեանը ժխտելն աղմուկէն անդին, պղտոր Նեղոսի Նոյեմբերի ջրին ամայի ափունքը. բաց աչքդ. տե՛ս գիշերը հաւառ սեւ ու մութ գիշերը իւր թանձր վարագոյրին տակ. որուն սաղայելեան անկիւններուն մէջ յաճախ անխնայ կը գործուին մարդկային անխղճութեան բիւրաւոր եղեռնը. բայց անա կ'անհետանայ. ինչպէս պիտի անհետանայ զքեզ տանջող անգութ մտածումի սեւ խորհուրդները: Դիտէ՛ ուրեմն Երկինքը որ իւր զուարթ երեսովը կ'սկսի ժպտիլ և վարագոյնը արշալոյսը՝ որ կ'ողջունէ առաւօտու օրհնարիւր գալուստը:

Ահա հոս յաւիտենական լուութեան մը վերին կատարելութիւնը կայ. դժգոհը, վշտաբևեռը ազատ ու համարձակ կարող է բանալ իր սիրտը . . . հողոյ բերը կը թեթեւանայ և միթէ արութեան արեւը կը ծագի:

Վստահացի՛ր. կեցի՛ր հոս ու թեւատարած վերնայէ. . . Նա պիտի լսէ քեզ և դու խսկոյնթութեամբ վշտերուդ անպատում հրճուանքը պիտի վայելես. գոհացի՛ր ու անգամ մ'եւս նայէ շուրջդ սիրող օղը իւր մեղեդիի անուշ շուրջներովը պիտի փարատէ սրտիդ մտայլ ու տխուր ստուերները. և դու միանգամ ընդմիշտ ցրուած պիտի գտնես վշտերդ, իրենց կարծեցեալ մեծութենէն իսպառ անհետացած:

Ահա թէ ի՞նչպէս. Նեղոսի գեղեցիկ կուրծքին վրայ փոքրիկ ու սիրուն կոհակները երեխայանման իրարու պլլուած, հարսի քայլերով կը մտենան քեզ ու մինչև ոտքերդ կը խոնարհին:

Զուարթացի՛ր, ու անխորհուրդ բնութեանը սպանալիքէն ամոր օղակներով պրկուած լեզուդ ա՛հ, անգամ մը թող խօսի:

Ազատ շունչ մը տ'ա և հողոյդ ու սրտիդ մէջ մեծացուցած սիրոյդ բարձրութիւնը հասուր մինչև Աստուծոյ տիեզերահայեաց արթոնին, ուսկից վար դէպ ի յերկիր հայած ասնոց պիտի գտնես զիս, ինկա՛ծ, խոնարհա՛ծ և մինչև ոտքերուդ պլլուած . . . և եթէ ձայներս պաղատանքներս արձագանք չ'գտնեն ու քու սիրոյդ վայելքը ես չ'կարենամ վայելել. ա՛հ, յիշէ՛ թէ պիտի վերջանամ ու անկէ անդին անցուցած տխուր բուպէներուս մէջ երգ մը պիտի հիւսեմ . . .

Հո՛ն, սիրեցեալ հողի, այդ երգին մէջ փնտռէ աճիւնս. սիրովդ կարօտովդ անշնչացած աճիւնըս, որոյ յիշատակին իբր անմահութիւն կը բաւէ միայն կաթիլ մը, միայն կաթիլ մը տաք արցունք . . .

Գահիրէ, 7 Նոյ. 99 ԱՍՏՂԻԿ

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱՎԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԲԱԹ 10 ՆՈՅԵՄԲԵՐ 1899

Ա. Թիւ	5869	շահած է	Պրանք	1000
Բ. "	7888	"	"	200
Գ. "	2155	"	"	100
Դ. "	1244	"	"	50
Ե. "	8812	"	"	50

Հետևեալք 25 ական ֆրանք կը շահին

4100	9150	4667	648	1659	9727
8603	1903	5630	6805	3840	8103
3980	4738	6913	2460	1593	4127
6518	5970	2260	2455		

ԾԱՆՈԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարզեներն ութը օրէն չեն գանձուիր, Բնկերութեան սնտուկին սեփականութիւնը կը լինին:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԿՈՐ ԴԱՍԵՐ

ՉԱՓԱՅԱՍՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ

ՀԱՅ ԱԻԵՏԱՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Ի ՏԱՎՈՒՅՏՅԵ

Առաջիկայ նոյեմբեր ամսոյ 6էն սկսեալ երեկոյները ժամը 7էն մինչև 9 1/2 պիտի աւանդուին Անգղ. Գաղղ. Արաբերէն և Հայերէն դասեր:

Իրմել առ Մ. Յ. ԳնԱճԵԱՆ Հիմնադիր-Տնօրէն Հայ Աւետարանական վարժարանաց:

ՀԱՅՎԱՋԵԱՆ ՓՈՒՈ

Յոգօքի Պաֆ վաճառատան մօտերը, Կամե-էլ-Պեմաքի ճիւղ զիմացը

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս իրենց նոր բացած փոռին մէջ, անխարդախ աւելի է կը պատրաստուի ԳԱՂՂԻԱԿԱՆ, ԱՆԳՂԻԱԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր: Սուրճի, թէյի և կաթի պաքսիմաթներ, և այլն:

Եկաւօֆ և Ընկերութիւն մեծ ջանք և հոգածութեան պիտի ունենան իրենց դիմող բոլոր յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու:

Յանձնարարութիւնք ամենայն ճշդութեամբ և փութով կը կատարուին 14-50

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ

ՄԱՆԿԱԲԱՐՋ

Վկայեալ սեղական կառավարութեան և բժեկական վարժարանէն

Իւր բնակութիւնը հաստատած է ի Շարա Ապտիւլ-Ապիզ, Այլի փաշա Շէրիֆի պարտիզին զիմաց:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկութեամբ ստացած փորձառութիւնը և տեղական կլիմայի պահանջներուն մասին ունեցած գիտակցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:

Իրեն դիմողները կատարելապէս գոհ պիտի յնան: 17-24

ԼԵՒՈՆ ԿԻՄԻՇԵԱՆ

ՎԱՃԱՌԱՑՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ՅՕՆՕԿՐԱՑ

ԳՒԱԶԻՐԷ, — Մուսոյի փողօց, — ԳՒԱԶԻՐԷ: Ս. Ե. Ս. Սեհնավիի վաճառատան զիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի և քօնսօլի ընտիր տեսակէ բանտիւներու մեծ մթերք:

ԳԻՄԵՑԷ՛Ք ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց և կանանց ժամացոյցներ, աղամանդազարդ, ոսկի, արծաթ և ցիֆէլ:

Յրանսական և ամերիկեան ապրանց ամենաընտիր տեսակներէն զարդեղէններ, շորաներ, օղեր, մասանիներ և այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԿՈՐ

30-50

ՏՕՐՓՅՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՍՄՆԱԲՈՅԺ Ապիսն, Շարէ Բուպի, թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ աղուներ:

Կը դադրեցնէ վայրկենապէս աղուայի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած աղուներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ: 3 9-10

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ Տայրիէի Սանիէի ճիւղ զիմաց

Ամենաընտիր ապրանքներէ կը պատրաստէ խիստ կոկիկ, հաստատուն և ճաշակաւոր կոշիկներ, արանց, կանանց և տղայոց համար:

Գիները չափաւոր և աժան: Փորձ մը միայն կը բաւէ: 22-24

ՏՊԱՐԱՆ-ՎԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՋԱՌԱՏՈՒՆ

Ի ԳՒԱԶԻՐԷ

ՇԱՐԱ ՄՕԶԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԳԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7էն մինչև երեկոյեան ժամը 8ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի և տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազդեր, Հրախրագրեր, Այցևախրեր, Ցանկեր, Գիրքեր, սեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմսեր, Բնկերութեանց եւ վաճառականներու տպագրական աւելն պիտոյցներ:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մարտութեան ճշգրտապահութեան և գներու չափաւորութեան մէջ:

Եզրիպտոսի ո և է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ս. Ա. ԳԱՐԲԻՆԵԱՆ

Le Gérant Dr A. S. HAGOPIAN

ԳՐԻԳՈՐ ՊԵՇԵՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ

Պազար Մուսոյի Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը Շարա Միւզէյինէն փոխադրած է ի Պազար Մուսոյի Յրանսական նորաձեւութեանց յար և նրման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած հմտութեամբ մինչև ցարդ գոհ ըրած է իրեն դիմող Պատ. յաճախորդներն:

Իւր գործածած ապրանքներու տոկունութիւնն երբէք տարակոյս չ'վերցնէր:

Իրեն եղած յանձնարարութիւնք ո'չ միայն չափաւոր գներով, այլ և փութով և մեծ խնամով կը պատրաստուին:

Դիմեցէք, կ'թէ կ'ուզէք ճաշակաւոր հագնիլ և կոշտերէ (նասրը) ազատ մնալ: 24-24

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (րաստըզ) սև, շագանակագոյն և ոսկեգոյն:

Սև ներկ շիշով վայրկենապէս սեւցնող: Սոյն ներկերու տեսողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադրեցնէ և մազերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տաղ) գլուխները մազ կը բերէ: 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած և հիանալի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 դրշող (2 ֆրանք):

Ճերմկցնող շուր շիշով, որը մարմնոյն բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու: Եզրիպտոսի մէջ միակը:

Աղուայի փոշի և շուր. մին մաքուր և ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող և ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ և օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք և կը փոխանակենք բոլոր տպագր գործածած նամակագրոյցները: 4 2-8